ԹԵՄԱ 1 ԵՎՐՈՊԱ

ԴԱՍ 1.5. Ռուսաստանի Դաշնություն: Աշխարհագրական դիրքը և սահմանները: Բնական պայմանները և ռեսուրսները

• • •

Ռուսաստանի մաթեմատիկաաշխարհագրական դիրքի առանձնահատկություններից է այն, որ հյուսիսային և արևելյան ծայրակետերը երկուսն են: Հյուսիսային ծայրակետերից մեկը գտնվում է **Ֆրանց-Իոսիֆի Երկիր** կղզեխմբի **Ռուդոլֆ** կղզու վրա (հս.լ. 81⁰49′, **Ֆլիգելի** հրվ.), որը հյուսիսային բևեռից հեռու է ընդամենը 900կմ, իսկ մայրցամաքի վրա հյուսիսային ծայրակետը **Չելյուսկին** հրվանդանն է (հս.լ. 77⁰43′), որը գտնվում է ՌԴ ամենախոշոր թերակղզու՝ **Թայմիրի** վրա: Այն նաև Եվրասիա մայրցամաքի հյուսիսային ծայրակետն է: Ռուսաստանի դաշնության հարավային ծայրակետը գտնվում է Ադրբեջանի հանրապետության հետ սահմանին (հս.լ. 41⁰11′): Այս սահմաններում երկրի ձգվածությունը հյուսիսից հարավ ավելի քան 4400 կմ է:

Ռուսաստանի արևմտյան ծայրակետը Կալինինգրադ քաղաքի մոտակայքում է՝ արլ.երկ. 19⁰38′, Բալթիկ ծովի մասը կազմող **Գդանսկի** ծովածոցի մի ավազոտ ցամաքալեզվակի վրա: Երկրի արևելյան ծայրամասերը գտնվում են արևմտյան կիսագնդում: Արևելյան ծայրակետերից կղզայինը գտնվում է **Ռատմանովի** կղզու վրա (հս.լ. 65⁰30′ և արմ.երկ. 1700), մայրցամաքայինը՝ **Դեժնևի** հրվանդանն է՝ արմ.երկ. 169⁰40′, **Չուկոտյան** թերակղզու վրա: Վերջինս նաև ԵՎրասիաՀ մայրցամաքի արևելյան ծայրակետն է:

• • •

Հյուսիսային ափագծից էլ մինչև Հյուսիսային բևեռ ձգվում է Արկտիկայի ռուսական սեկտորը: Այն ներառում է արկտիկական մի շարք կղզիներ և Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ջրային տարածությունները և օվկիանոսի մասը կազմող ծովերը (քարտեզի վրա ցույց տվեք այդ ծովերը և կղզիները): Արկտիկական սեկտորը սահմանափակվում է պայմանական

գծերով, որը ռուս-նորվեգական սահմանից հասնում է մինչև Ռատմանովի կղզի: Հյուսիսային սառուցյալ օվկիանոսով անցնում է Հյուսիսային ծովային ուղին, որը ծայր հյուսիսային շրջանների համար ծառայում է որպես հուսալի «կյանքի ճանապարհ»՝ Մուրմանսկից հասնելով Բերինգի նեղուց, որտեղից էլ՝ Խաղաղ օվկիանոս, Վլադիվոստոկ նավահանգիստ:

• • •

ՌԴ հարավային սահմանների կարևոր առանձնահատկություններից է այն, որ այստեղ են ՌԴ-ի հետ ամենաերկար սահման ունեցող պետություն-ները՝ Ղազախստանը (7200 կմ), Չինաստանը (4350 կմ) և Մոնղոլիան (3000 կմ): ՌԴ հարավային սահմանների ՔԱԴ-ի կարևոր առանձնահատկութ-յուններից է Կասպից ծով-լիճ աքվատորիայի գոյությունը, որն իր ափերին գտնվող երկրների կողմից օգտագործվում է ոչ միայն որպես հաղորդակ-ցության ճանապարհ, ձկնային և հանքային հարստությունների շտեմարան, այլև ռազմաքաղաքական սահման: Սակայն այդ երկրների միջև Կասպից լճի բաժանման սահմանները դեռևս հստակեցված չեն:

Ռուսաստանի տարածքի միջին բարձրությունը ծովի մակարդակից մի փոքր է գերազանցում 400 մ-ը: Տարածված են ինչպես բարձր լեռնաշղթա-ներ, այնպես էլ՝ ընդարձակ հարթավայրեր:

• • •

Երկրի մեծությունը և մակերևույթի ձևերի բազմազանությունը մեծապես ազդում է կլիմայի ձևավորման վրա: Տարածքի մեծ մասը բարեխառն ջեր-մային գոտում է, մնացածը՝ ցուրտ և սառնամանիքային: Երկրի արևելյան շրջաններում կլիման բարեխառն մուսսոնային է (ինչ գիտեք մուսսոնային կլիմայի մասին): Մեծ է Ատլանտյան օվկիանոսից թափանցող արևմտյան քամիների ազդեցությունը: Դրանք տիրապետում են տարվա տաք սեզո-նին, իսկ ձմռանը ՌԴ մեծ մասում գերակշռում է Ասիական մաքսիմումը (բարձր ճնշման մարզ) և դիտվում է օդի ջերմաստիճանի ու խոնավության նվազում:

• • •

Խորքասառույցի շերտի հաստությունը մի քանի հարյուր մետրից մինչև 600-700մ է (Թայմիր թերակղզի): Կարճատև ամառվա ընթացքում գրուն-տը տեղ-տեղ անհամաչափ է տաքանում և 0,5-2մ հաստությամբ շերտով հալվում է: Բազմամյա սառածությունը ընդգրկում է ՌԴ տարածքի գրեթե

կեսը: Այն հիմնականում տարածվում է Սիբիրում: Բազմամյա խորքասառույցը դժվարացնում է տարածքի տնտեսական յուրացումը:

Սրա հետ մեկտեղ ՌԴ լայնատարած տափաստանային, մասամբ էլ անտառատափաստանային բնական զոնաները, բերրի սևահողերը բուսաբուծության զարգացման կարևոր գործոն ու պայման են:

• • •

Այս սահմաններում երկրի ձգվածությունը արևմուտքից արևելք ավելի քան 10000 կմ է: ՌԴ-ն արևմուտքից արևելք մեծ ձգվածության պատճառով ընկած է 11 ժամային գոտիներում, մայրաքաղաք Մոսկվան՝ 2-րդ, Չուկոտյան թերակղզին՝ 12-րդ: Սակայն հարմարության համար 11-րդ և 12-րդ ժամային գոտիները միավորվել են մեկ գոտու մեջ, ուստի Նոր տարին ՌԴ սահմաններում դիմավորում են ոչ թե 11, այլ 10 անգամ:

Երկրի վիթխարի չափերով էլ պայմանավորված են ինչպես սահմանների մեծ ձգվածությունը, այնպես էլ՝ բնական պայմանների բազմազանությունը և բնական ռեսուրսների հարստությունը:

ՌԴ սահմանների երկարությունը գրեթե 61 հազար կմ է՝ 1,5 անգամ երկար հասարակածից: Ավելի քան 20000 կմ-ը ցամաքային սահմաններն են, որոնք երկրի հարավում և արևմուտքում են:

• • •

ՌԴ արևելյան սահմանները ևս ծովային են: Դրանք անցնում են Խաղաղ օվկիանոսով, որտեղ երկրի հարևանները ԱՄՆ-ն և Ճապոնիան են: Բերինգի նեղուցում ԱՄՆ-ի հետ սահմանն անցնում է 5 կմ լայնությամբ նեղուցով, որը բաժանում է ՌԴ-ին պատկանող **Ռատմանովի** կղզին ԱՄՆ-ին պատկանող **Կրուզենշտերնի** կղզուց: Իսկ ճապոնական Հոկայդո կղզուց ռուսական Սախալին և Կուրիլյան կղզիները բաժանվում են **Լապերուզի** և **Կունաշիրի** նեղուցներով:

Արևելքում ՌԴ ՔԱԴ-ի կարևոր առանձնահատկությունն այն է, որ Ճապոնիան տարածքային հավակնություններ ունի Կուրիլյան մի շարք կղզիների նկատմամբ՝ **Կունաշիր**, **Իտուրուպ**, **Շիկոտան**, **Հաբոմայ**, որոնց մակերեսը մոտ 8.5 հազ. քառ. կմ է: Սակայն Ճապոնիան ՌԴ-ի նկատմամբ վարում է զուսպ և զգուշավոր քաղաքականություն: Քարտեզի վրա ցո՛ւյց տվե՛ք Խաղաղ օվկիանոսի՝ ՌԴ-ի ափերը ողողող ծովերը, նշանավոր նեղուցները, կղզիները և թերակղզիները:

ՌԴ-ի հարավային սահմանները հիմնականում անցնում են դժվա-

ռամատչելի և նոսր բնակեցված շրջաններով Սև ծովից հասնելով մինչև Ճապոնական ծով: ՌԴ հարավային հարևանները հիմնականում բարեկամ և չեզոք երկրներ են: Վերապահումներ կան Վրաստանի հարցում, որովհետև այդ երկիրը ևս ՌԴ–ի հետ սահմանային լուրջ խնդիրներ ունի (խոսքը Աբ–խազիայի և Հարավ օսեթական հանրապետությունների մասին է):

• • •

Քարածխի խոշոր հանքավայրեր կան երկրի եվրոպական մասում՝ Պեչորայի ավազան, Դոնեցի ավազանի արևելյան շրջաններ: Սիբիրում վա–ղուց յուրացված է Կուզնեցի խոշոր (կոքսացող ածուխ) ավազանը, որտեղ արդյունահանումը իրականացվում է բաց ու ստորգետնյա եղանակներով: Խոշոր են նաև **Տունգուսկայի**, **Լենայի** ածխի և **Կանսկ–Աչինսկի** գորշ ածխի ավազանները: Ռուսաստանում կան նաև տորֆի և այրվող թերթաքարերի զգալի պաշարներ:

• • •

Ռուսաստանի եվրոպական մասը զբաղեցնում են Ռուսական (Արևելաեվ–րոպական) հարթավայրի մեծ մասը և Ուրալը: Իսկ Ասիական մասը ներառում է Նախակովկասը, Մեծ կովկասյան լեռնային համակարգի լեռնաշղթաների հյուսիսային լեռնալանջերը, Սիբիրը և Հեռավոր Արևելքը:

• • •

«Հավաքական արևմուտքը» տասնյակ և հարյուր միլիարդավոր դոլա–րի զենք և զինամթերք է տրամադրել և շարունակում է տրամադրել Ուկ–րաինային: ՌԴ–ի նկատմամբ բազմաթիվ քաղաքական, դիվանագիտական, մշակութային, մարզական (օրինակ՝ միջազգային մարզական կազմակեր–պությունները՝ ՈՒԵՖԱ, ՖԻՖԱ և այլն ՌԴ–ին զրկել են համաշխարհային ֆուտբոլային տարբեր մրցաշարերի մասնակցելու իրավունքից) լոգիստիկ և այլ արգելքներ կան (**վետո**): Կիրառվում են տնտեսական, ֆինանսական սանկցիաներ (**էմբարգո**) և այլն:

• • •

ՌԴ տարածքի 70%–ից ավելին զբաղեցնում են հարթավայրերը, որոնցից խոշորագույնը Արևելաեվրոպական կամ Ռուսական բլրավետ հարթավայրն է (տարածքը՝ մոտ 4 մլն քառ. կմ), որը հերցինյան հասակի հին ու քայ–

քայված **Ուրալյան** լեռներով բաժանվում է **Արևմտա–Սիբիրական** ճահճոտ դաշտավայրից: Դաշտավայրից արևելք տարածվում է **Միջինսիբիրական** սարահարթը: Լենա գետից արևելք, հյուսիսարևելյան Սիբիրում տարածվում են **Վերխոյանսկի** և **Չերսկու** լեռնաշղթաները: Ասիական մասի հարավում ձգվում է **Հարավային Սիբիրի լեռնային** գոտին՝ **Ալթայ**, **Սայաններ** և այլ լեռնաշղթաներով:

• • •

Ռուսաստանում առկա են մետաղական օգտակար հանածոների՝ սև և գունավոր մետաղների զգալի պաշարներ: Երկաթաքարի պաշարներով ՌԴ–ն աշխարհում առաջինն է: Հարուստ պաշարներ կան **ԿՄԱ** (Կուրսկի մագնիսական անոմալիա) հանքագոտում, **Ուրալում** և **Մերձանգարյան շրջանում**, երկաթի և նիկելի պաշարներ՝ Կոլա թերակղզում, բազմամետաղներ՝ **Նորիլսկի** շրջակայքում: Բոքսիտների պաշարներով աչքի են ընկնում **հյուսիսային Ուրալը**, **Կարելիան:**

• • •

Քիմիական արդյունաբերության համար կարևոր հումք է կալիումական աղը, որի խոշոր պաշարներ կան Պովոլժիեում (**Սոլիկամսկ**): Կերակրի աղի հարուստ պաշարներ կան Պովոլժիեում: **Էլթոն** և **Բասկունչակ** լճերից տարեկան արդյունահանվում է 10 մլն տ աղ: